

Երևանի գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի "Ուրարտու"

համալսարանում բացված նոր լսարանը անվանվեց սփյուռքահայ բարերար
Լոժեն Գարիքեանի անունով

04-10-2012 08:25:05 | Հայաստան | Հասարակություն

Երևանի գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանը հոկտեմբերի 3-ին նշեց իր գործունեության քսանամյա հոբելյանը: Այս կապակցությամբ կազմակերպված ցերեկույթին համալսարանի ռեկտոր Սեդրակ Սեդրակյանն ներկայացրեց ԲՈՒՀ-ի անցած ճանապարհը, խոսեց ձեռքբերումների և ապագա ծրագրերի մասին: Նա ներկայացրեց նաև ցերեկույթի պատվավոր հյուր, բարերար Լոժեն Գարիքեանին, խոսեց Հայաստանում իրականացրած նրա բարեգործական աշխատանքների մասին: "Իրանհայ բարերար Լոժեն Գարիքեանը Հայաստանի տարբեր ուսումնական հաստատությունների շուրջ տասնյակ անապահով ուսանողների վարձավճարի տրամադրումից բացի հնարավորությունների շրջանակներում օժանդակում է նաև քաղցկեղով հիվանդներին: Նա շուրջ 3 տասնյակ գրքերի հրատարկման հովանավորն է, - իր խոսքում ասաց Սեդրակ Սեդրակյանը: Սեպտեմբերին համալսարանում կայացած գիտական խորհրդի նիստի քննարկման արդյունքների համաձայն այսուհետ 2 լավագույն ուսանող կստանան հատուկ սահմանված Լոժենի Գարիքեանի անվան կրթաթոշակ (կստվորեն անվճար): Համալսարանում բացվեց նաև նոր լսարան, որն` ի նշան երախտագիտության, անվանվեց սփյուռքահայ բարերար Լոժեն Գարիքեանի անունով:

Նոյյան տապան - Հասարակություն

Լուրեր Հայաստանից և Սփյուռքից

- See more at: <http://www.nt.am/am/news/172027/#sthash.VdFbshY5.dpuf>

<http://www.nt.am/am/news/172027/>